ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS[4]	NKJV	NRSV	TEV	NJB
Զավակներ և ծնողներ	Զավակներ և ծնողներ	Քրիստոնեական ընտանիքը	Զավակներ և ծնողներ	Ընտանիքը բարքերը
		(5:21-6-9)		(5:21-6:9)
6:1-4	6:1-4	6:1-3	6:1-3	6:1-4
		6:4	6:4	
Տերեր և ծառաներ	Տերեր և ծառաներ		Տերեր և ծառաներ	
6:5-9	6:5-9	6:5-8	6:5-8	6:5-9
		6:9	6:9	
Պատերազմ չարի դեմ	Աստծո սպառազինությունը	Աստծո զենքերը և Քրիստոնյայի պատերազմը	Աստծո սպառազինությունը	Հոգևոր պատերազմ
6:10-20	6:10-20	6:10-17	6:10-13	6:10-13
			6:14-20	6:14-17
		6:18-20		6:18-20
Հրաժեշտի խոսքեր	Ծնորհքի ողջույնի խոսք	Անձնական հարցեր և Օրհնության խոսք	Հրաժեշտի խոսքեր	Անձնական նորություններ և հրաժեշտի խոսք
6:21-22		6:21-22	6:21-22	
	6:21-24			6:21-22
6:23-24		6:23-24	6:23-24	
				6:23-24

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6:1-9-ի համար

Ա. Գրական այս բաժինը սկսվում է Եփես. 5:22-ում, երբ Պողոսը կիրառում է Քրիստոնեական ընտանիքը որպես Հոգով լեցուն կյանքի օրինակ, թե ինչպես է այն ազդում մեր ամենօրյա կյանքերի վրա (տես՝ Եփես. 5:18):

Բ. Պողոսի ընտանեկան օրինակը անդրադառնում է երեք զույգերի՝
1. կանանց և ամուսիններին
2. զավակներին և ծնողներին
3. տնային ծառաներին և տերերին:

Դ. Այս ընտանեկան օրինակը գործ ունի բացառապես Քրիստոնեական ընտանիքի հետ: Փոխադարձ հարգանքի և սիրո զորությունը չափանիշներ է դնում: Այս համատեքստը չի անդրադառնում Քրիստոնյա այս երեք զույգերի միայն մեկ կողմի խնդրին: Հավատացյալների վերաբերմունքը ուրիշների հանդեպ որոշվում է Քրիստոսի հետ իրենց փոխհարաբերությամբ և <u>ոչ</u> թե մյուս կողմի արժանիքներով կամ գործերով:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6:1-3
[1]Զավակնե՛ր, ձեր ծնողներին հնազա՛նդ եղեք Տիրոջով, որովհետև դա՛ է ճիշտը. [2]«Պատվի՛ր քո հորը և մորը». սա առաջին պատվիրանն է, որ խոստում ունի՝ [3]«որպեսզի լավ լինի քեզ համար, և երկար կյանք ունենաս երկրի վրա»:

6:1 «զավակներ» Հայտնի չէ, թե որ տարիքային խմբին է այս խոսքը վերաբերում: Հրեական կյանքում տղան դառնում է տղամարդ 13 տարեկանում (այսինքն՝ *bar mitzvah*)՝ Օրենքի առջև պատասխանատու և ամուսնության պատրաստ, իսկ աղջիկը կին էր դառնում 12 տարեկանում (այսինքն՝ *bath mitzvah*): Հռոմեական մշակույթի մեջ տղան դառնում է տղամարդ 14 տարեկանում, իսկ հունական մշակույթի մեջ՝ 18 տարեկանում:

❖ **«հնազանդ եղե՛ք»** Սա ներկա ներգործական հրամայական է, որը հունարեն բաղադրյալ բառ է՝ կազմված «լսել» և «ներքո» բառերից: Կողոսացիների համազորը ավելացնում է «ամեն բանի մեջ»: Այս հնազանդությունը պետք է լինի ժամանակի ինչ-որ հատվածում (մանկություն): Նույնիսկ այս հրամանը պետք է հավասարակշռվի Մատթ. 10:24-29-ի հետ: Ամենաբարձր իշխանությունը ծնողականը չէ, այլ աստվածայինը:

❖ **«Տիրոջով»** Այս արտահայտությունը բաց է թողնված հնագույն հունարեն ունցիալ ձեռագրերում՝ B, D^4, F և G-ում, սակայն առկա է P^{46}, ℵ, A և D^1-ում, ինչպես նաև Վուլգատտան, Փեշիտտան, կոպտիկ և հայկական թարգմանությունները: Այս խոսքի ներառումը հստակեցնում է, որ համատեքստը Քրիստոնեական ընտանիքն է: Այս համատեքստը նկատի ունի Քրիստոնյա երեխային և Քրիստոնյա ծնողներին:

❖ **«որովհետև դա է ճիշտը»** Աստվածաշունչը հստակ է արտահայտում ծնողների և երեխաների միջև առկա աստվածատուր փոխհարաբերությունը (տես՝ Կող. 3:20, Առակ. 6:20, 23:27): Ամուր հասարակությունները կազմված են ամուր ընտանիքներից:

6:2 «պատվիր» Սա ներկա ներգործական հրամայական է: Սա մեջբերում է Տասը Պատվիրաններից (տես՝ Ելից 20:12, 2 Օրինաց 5:16): «Պատվել» բառը կոմերցիոն տերմին էր, որը նշանակում էր «ճիշտ

կշռել»: Այն արտացոլում էր ՀԿ-յան «ծանր»-ի արժեքավոր լինելու հասկացությունը: Քրիստոնյա երեխաները պետք է հարգեն ու արժեվորեն իրենց ծնողներին: Կատարյալ ծնողներ գոյություն չունեն (ինչպես և գոյություն չունեն կատարյալ զավակներ):

❖ **«հորը և մորը»** Սա ցույց է տալիս, որ երկուսն էլ արժանի են պատվի և հարգանքի:

❖ **«(առաջին պատվիրան է, որ խոստում ունի)»** Եփես. 6:3-ի այս մեջբերումը կիրառված է 2 Օրինացում մի քանի տարբեր համատեքստերում (տես՝ Եփես. 4:40, 5:16, 33, 30:17-18): Այն երկարակեցության անհատական խոստում չէ, այլ մշակութային խոստում՝ հասարակական կայունության համար: Ուշադրություն դարձրե՛ք, որ Պողոսը մեջբերելով Տասը Պատվիրաններից, ցույց է տալիս, որ Օրենքը (Ծննդոցից- 2 Օրինաց) դեռևս գործում է որպես բացահայտող ուղեցույց Քրիստոնյայի համար (տես՝ Եփես. 4:25,26, Հռոմ. 10:4, 13:9-10, Գաղ. 2:15-21), այլ ոչ թե փրկության համար (տես՝ Գաղատացիների 3):

6:3 «երկրի վրա» Պողոսը ՀԿ-յան «այն երկրում, որ Տեր Աստվածը տալու է քեզ» մեջբերումից փոփոխելով (տես՝ Ելից 20:12, 2 Օր. 5:16) դարձրել էր ընդհանուր սկզբունք: ՆԿ-յան հեղինակ—ները հաճախ վերցնում էին ՀԿ-յան խոստումները, որոնք տրված էին Իսրայելին և փոփոխում էին՝ դարձնելով տիեզերական ճշմարտություններ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6:4
4Հայրե՛ր, ձեր զավակներին բարկության մի՛ դրդեք, այլ նրանց մեծացրեք Տիրոջ խրատով և ուսմունքով:

6:4
NASB, NKJV, NRSV **«հայրեր»**
TEV, NJB **«ծնողներ»**

Հունարեն տեքստը տալիս է «հայրեր»: Ժամանակակից անգլերեն դինամիկ համազոր թարգմանությունները (TEV և NJB) ընդլայնել են նշանակությունը Եփես. 6:2-ի պատճառով, որտեղ թե՛ հայրը և թե՛ մայրը նշվում են: Սակայն, Եփես. 5:21-6:9-ի ավելի ընդարձակ համատեքստում Պողոսը անդրադառնում է առաջին երեք խմբերին, որոնք սոցիալական իրավունքներ չունեին՝ կանանց, երեխաներին և ծառաներին, և ապա դիմում է նրանց, ովքեր ունեն բոլոր իրավունքներըէ ամուսիններին, հայրերին և տերերին: Քրիստոնեական ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի իր հոգևոր պատասխանատվությունը:

❖ **«բարկության մի՛ դրդեք»** Սա ներկա ներգործական հրամայական եղանակ է՝ ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող գործողության դադարեցում (տես՝ Կող. 3:21): Ինչպես որ 5:25-ը, սա էլ հանդիսանում էր թե՛ հունա-հռոմեական աշխարհում և թե՛ մեր օրերում անհրաժեշտ բալանսավորում: Հայրերը ամենաբարձր իշխանությունը չեն, այլ իրենց Քրիստոնեական ընտանիքների տնտեսները:

Քրիստոնյա հայրերը պետք է հասկանան իրենց տնտեսության դերը իրենց երեխաների կյանքում: Հայրերը չպետք է սովորեցնեն անձնական նախասիրություններ, այլ՝ հոգևոր ճշմարտություններ: Նպատակը ծնողական իշխանությունը չէ, այլ Աստծո իշխանությունը զավակներին փոխանցելը: Միշտ այս երկու սերունդների միջև առկա է բաց տարածք, բայց ոչ աստվածային իշխանության և զավակների: Երեխաները Աստծուն հաճեցնելու համար չպետք է արտացոլեն ծնողների սովորույթները, նախասիրությունները կամ ապրելակերպը: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի մեր զավակներին չձուլենք մեր մշակութային հասկացությունների մեջ կամ էլ նրանց միջոցով արտացոլենք մեր իսկ նախասիրությունները:

Որպես մի մեծ դպրոցից մոտ գտնվող տեղական եկեղեցու հովիվ, նկատել եմ, որ ամենավայրի երիտասարդները դուրս են գալիս պահպանողական Քրիստոնեական ընտանիքներից, որոնք թույլ

չեն տալիս իրենց զավակներին անձնական ընտրություններ կատարելու կամ զրկում են ազատություններից: Ազատությունը կարևոր փորձառություն է և պետք է այն ներկայացվի պատասխանատու փուլերով: Քրիստոնյա զավակները պետք է իրենց կյանքը ձևավորեն իրենց անձնական համոզմունքի և հավատքի, և ոչ թե երկրորդ ձեռք հանդիսացող ծնողական կանոնների հիման վրա:

❖ **«մեծացրեք»** Սա ներկա ներգործական հրամայական է, որը բխում է ինչպես Եփես. 5:29-ում է նշվում «կերակրել մինչև հասունություն» միևնույն խոսքի արմատից: Ինչպես որ ամուսնու պատասխանատվությունն է շարունակել օգնել իր կնոջը աճելու հոգևոր հասունության և պարգևների մեջ, այնպես էլ նա պատասխանատու է իր երեխաների համար, որպեսզի հասնեն լիարժեք հոգևոր հասունության և շնորհների մեջ (տես՝ Եփես. 4:7):

NASB, NRSV	**«Տիրոջ դաստիարակությամբ և ուսմունքով»**
NKJV	**«Տիրոջ ուսմունքով և հանդիմանությամբ»**
TEV	**«Քրիստոնեական դաստիարակությամբ և խրատով»**
NJB	**«շտկեք նրանց և առաջնորդեք այնպես, ինչպես Տերն է անում»**

Առաջին տերմինը հունարեն «երեխա» բառի արմատից է և վերաբերում է երեխաների ծնողական դաստիարակությանը (տես՝ Եբր. 12:5,7,8,11) և հավատացյալների Տիրոջ ուսմունքին (տես՝ 2 Տիմ. 3:16):

Երկրորդ տերմինը ընդհանուր տերմին է զգուշացման, շտկելու կամ հանդիմանելու համար (տես՝ 1 Կորնթ. 10:11, Տիտոս 3:10): Երեխաների հավատքի մեջ դաստիարակելը Հուդայականության մեջ գլխավոր շեշտադրություն էր (տես՝ 2 Օր. 4:9, 6:7-9, 20-25, 11:18-21, 32:46): Ծնողական դաստիարակությունը գիտակցում է հաջորդ սերունդներին Աստծո մասին անձնական հավատքի և սուրբգրային ճշմարտությունների, և ոչ թե ծնողների անձնական նախասիրությունների կամ մշակութային կարծիքների փոխանցման անհրաժեշտությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6:5-8

5Ծառանե՛ր, հնազանդվեցե՛ք ձեր մարմնավոր տերերին, ահով ու դողով և ձեր սրտի անկեղծությամբ, ինչպես Քրիստոսին: 6Ոչ թե մարդահաճոյի պես՝ առերես ծառայելով, այլ որպես Քրիստոսի ծառաներ՝ Աստծո կամքը սրտանց կատարելով, 7հոժարությամբ, ինչպես կծառայեիք Տիրոջը և ոչ թե մարդկանց. 8իմանալով, որ ամեն մարդ, ինչ լավ բան որ անի, նույնը Տիրոջից պիտի ստանա՝ ծառա լինի, թե ազատ:

6:5 «ծառաներ» Սա Պողոսի երրորդ ընտանեկան օրինակն է, որով ցույց է տալիս, թե ինչպես կարող է Հոգով լցվելը ամենօրյա կյանքում փոփոխություն բերել (տես՝ Կող. 3:22): «Ծառաներ» (*douloi*) վերաբերում է տան ծառաներին:

❖ **«հնազանդվեցե՛ք»** Սա ներկա ներգործական հրամայական է: Գոյություն ունի մի հրաշալի համազոր հատված 1 Պետ. 2:18-21-ում: Ակնհայտ զուգահեռներ կան կանանց, երեխաների և ծառաների միջև, բացառությամբ այն բանի, որ կանանց չի պատվիրվում հնազանդվել ինչպես երեխաները (ինչոր ժամանակահատված), իսկ ծառաներին հրամայվում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՈՂՈՍԻ ՀՈՐԴՈՐՆԵՐԸ ԾԱՌԱՆԵՐԻՆ
SPECIAL TOPIC: PAUL'S ADMONITIONS TO SLAVES

1. Գոհացե՛ք, սակայն եթե ազատության հնարավորություն ընձեռնվի, ապա օգտվեք դրանից (1 Կորնթ. 7:21-24):
2. Քրիստոսի մեջ չկա ծառա կամ ազատ (Գաղ. 3:28, Կող. 3:11, տես՝ 1 Կորնթ. 12:13)

3. Գործեք կարծես թե Տիրոջ համար. Նա ձեզ վարձահատույց կլինի (Եփես. 6:5-9, Կող. 3:22-25, տես՝ 1 Պետ. 2:18-20):
4. Քրիստոսի մեջ ծառաները դառնում են եղբայրներ (1 Տիմ. 6:2, Փիլիմոն 1:16-17)
5. Աստվածահաճո ծառաները Աստծուն պատիվ են բերում (1 Տիմ. 6:1, Տիտոս 2:9):

Պողոսի հորդորները ծառաների տերերին.

Քրիստոնյա ծառաներն ու տերերը ունեն միևնույն Տերը, հետևաբար, նրանք իրար հետ հարգանքով պետք է վարվեն (Եփես. 6:9, Կող. 4:1):

Ստրկությունը մշակութային մի երևույթ է (ինչպես Նահապետական մշակույթը), որը առաջին դարի աշխարհում այուն էր հանդիսանում: ՆԿ-ը չի վատաբանում այն: Սակայն ավետարանի ճշմարտությունները ժամանակի ազդեցության ներքո փոփոխվում են մշակույթի նմանօրինակ ասպարեզներում:

❖ **«ձեր մարմնավոր տերերին»** Այստեղ կիրառվում է հունարեն մարմին (*sarx*) տերմինը՝ ֆիզիկական իմաստով և ոչ թե չարի: Այս ընդհանուր կիրառության ճշմարտությունը առնչվում է թե՛ Քրիստոնեական տերերին, և թե՛ հեթանոս (այսինքն՝ թե՛ բարիներին, և թե՛ անբարյացակամներին): Ուշադրություն դարձրեք «Տիրոջով» արտահայտությունն այստեղ չեք կարող գտնել, ինչպես նախորդող երկու ընտանեկան օրինակներում (տես՝ Եփես. 5:21 և 6:1):

Ժամանակակից արևմտյան մշակույթը չունի ծառաներ՝ ստրուկներ, մինչդեռ այս հոգևոր ճշմարտությունը անշուշտ վերաբերում է Քրիստոնյա գործատուներին և գործավորներին:

❖ **«ահով ու դողով»** Սա հարգանքի՝ ակնածանքի փոխաբերություն է (տես՝ 1 Կորնթ. 2:3, 2 Կորնթ. 7:15, Փիլ. 2:12):

❖ **«ձեր սրտի անկեղծությամբ»** Սա «եզակիություն, միամտություն» տերմինից բխող փոխաբերություն է: ՆԿ-ում այն երկու կերպ է կիրառվում (1) անկեղծություն (տես՝ 2 Կորնթ. 1:12, 11:3, Կող. 3:22) կամ (2) ազատամտություն (տես՝ Հռոմ. 12:8, 2 Կորնթ. 8:2, 9:11,13): Այս համատեքստում ակնհայտ է, որ #1 է տարբերակը: Հավատացյալի շարժառիթն է մշտապես հանդիսանում ճիշտ՝ տեղին գործողության բանալին, և ոչ թե դիտողությունը (տես՝ Եփես. 6:6-7): Հավատացյալներն իրենց կյանքի բոլոր բնագավառներում ապրում են Տիրոջ համար (տես՝ Կող. 3:22-25 և Հռոմ. 14:7-9): Նրանց դրդապատճառը ոչ թե դիմացինի արժեքը կամ արժանիքն է, այլ թե ով են Քրիստոսի մեջ:

Քրիստոնյա ամուսինները սիրում են իրենց կանանց ոչ թե նրանք կատարյալ են կամ արժանի են դրան, այլ քանի որ նրանք Քրիստոնյա են: Սա գործում է բոլոր մարդկային միջանձնային փոխհարաբերությունների համար: Հավատացյալները սիրում են Աստծուն, երբ սիրում են Նրա պատկերով ստեղծված մարդկանց, որոնց համար Նա մահացել է (տես՝ 1 Հովի. 2:9,11, 4:20): Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Սիրտ</u>, Կող. 2:2-ում:

❖ **«ինչպես Քրիստոսին»** Հավատացյալները ուրիշների հանդեպ վարվում են ըստ Քրիստոսի հետ իրենց ունեցած փոխհարաբերության , ոչ թե ուրիշներն ինչի են արժանի (տես՝ Եփես. 5:22, Հռոմ. 14:7-9): Սա ճիշտ է ամուսինների և կանանց համար, ծնողների և զավակների համար, տերերի և ծառաների համար: Հավատացյալները մարդկանց կարևորում են Աստծո պատկերի և նրանց հանդեպ Աստծո ունեցած սիրո համար, և ոչ թե նրանց անձնական արժանիքների:

6:8 «իմանալով ինչ լավ բան» Այս համատեքստը պաշտամունքի միջավայրում չէ, այլ հավատացյալների այլոց, Քրիստոնյա ընկերների և անհավատների հետ ամենօրյա շփման միջավայրում: Աստծո համար կարևոր են մեր բոլոր գործողությունները: Չկա աշխարհիկ. ամեն բան սրբացված է:

Համար 8-ը երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որն արտահայտում է պոտենցիալ ապառնի գործողություն: Հավատացյալներից ակնկալվում է բարի գործեր կատարել (տես՝ Եփես.

1:4, 2:10, 4:17-5:14): Հավատացյալները Աստծո առջև շիտակ դիրք չեն գրավում բարի գործերով, այլ փրկվում են բարի գործերի համար:

❖ **«նույնը Տիրոջից պիտի ստանա»** Աստված հսկում է հավատացյալների կյանքերը և նրանք հաշվետու են լինելու (տես՝ 2 Կորնթ.5:10): Աստվածաշունչը խոսում է վարձքերի (տես՝ Մատթ. 5:12,46, 6:1-2, 10:41-42, Ղուկ.6:23, 35, 1 Կորնթ.3:8, 14, 9:17-18, 2 Հովհ.8, Հայտն.11:18, 14:13, 22:12) և պսակների (տես՝ 1 Կորնթ.9:25, 2 Տիմ.4:8, Հակ.1:23, 1 Պետ.5:4, Հայտն.2:10) մասին: Պողոսը Գաղ.6:7-9-ի պես մի ընդհանուր սկզբունք է սահմանում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6:9
9Եվ դուք, տերե՛ր, նույնը արեք նրանց հանդեպ՝ թողնելով սպառնալիքները: Իմացե՛ք, որ և՛ նրանց, և՛ ձեր Տերը երկնքում է, և Նրա մոտ աչառություն չկա:

6:9 «տերեր» Սա դեռևս մտնում է 5:22-6:9-ի գրական բաժնի համատեքստում, որը Պողոսի բերած ընտանեկան օրինակն է, թե ինչ է «Հոգով լեցուն» կյանքը գործողության մեջ: Այս համարում տերերը ըստ երևույթին վերաբերում են հավատացյալներին, մինչդեռ Եփես.6:5-ում նրանք կարող են լինել թե՛ հավատացյալներ և թե՛ անհավատներ:

❖ **«նույնն արեք նրանց հանդեպ»** Սա ներկա ներգործական հրամայական է: Կրկին ունենք անհրաժեշտ բալանս ստրկատերերի նկատմամբ, ինչպես 5:29-ում ամուսինների նկատմամբ է և 6:4-ում՝ ծնողների: Յուրաքանչյուրը պետք է վարվի աստվածահաճո սկզբունքների համեմատ (Հոգով լեցուն) և ոչ թե սոցիալական արտոնության: Հիսուսի տված ոսկե կանոնը (Մատթ.7:12) վերաբերում է սրան:

❖ **«թողնելով սպառնալիքները»** Սա ներկա ներգործական դերբայ է՝ կիրառված հրամայականի տեսքով: Բառացի այս խոսքը նշանակում է «հանգիստ թողնելով»:

❖ **«Նրա մոտ աչառություն չկա»** «Աչառություն» տերմինը «դեմք» և «բարձրացնել» բառերից կազմված բաղադրյալ տերմին է: Այն մատնացույց է անում ՀԿ-յան դատավարության ազնվությունը՝ առանց դեմքը վեր բարձրացնելու, որպեսզի դատավորը առանց մեղադրյալին ճանաչելու կատարի իր որոշումը: Աստված մարդահաճո չէ (տես՝ 2 Օր.10:17, Գործք 10:34, Հռոմ.2:11, Գաղ.2:6, Կող. 3:25, 1 Պետ.1:17): Բոլոր երկրավոր կողմնակալությունները մարում են Քրիստոսի մեջ (տես՝ Հռոմ. 3:22, Գաղ.3:26,28, Կող.3:11): Տե՛ս Հատուկ Թեմա. Ռասսիզմ, Կող.3:11:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է այս հատվածը այդքան զարմանալի Պողոսի օրոք:
2. Ի՞նչն է այս հատվածը ավելի շեշտադրում՝ իրավունքները, թե՞ պարտավորությունները:
3. Ի՞նչ է ասում այս հատվածը կանանց վերաբերյալ: Արդո՞ք պետք է, որ այս հատվածը մեր օրերի համար կիրառվի որպես ուղեցույց:
4. Ինչպե՞ս է Եփես.6:21-ը կապված 5:22-6:9-ի հետ:
5. Արդո՞ք պետք է երեխաները միշտ հնազանդվեն ծնողներին:

6. Կարո՞ղ է արդյոք տեր ու ծառա փոխհարաբերությունը լինի համազոր գործատու-գործավոր հարաբերությանը:
7. Կանայք և երեխաները ի՞նչ կապ ունեն ծառաների հետ:

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6:10-24-Ի ՀԱՄԱՐ

Ա. Քրիստոնեական կյանքը հոգևոր պայքար է: Խնդիրները, տառապանքը և հալածանքը տարօրինակ չեն, այլ նորմալ են Քրիստոնյաների համար այս մեղավոր՝ ընկած աշխարհում (տես՝ Հռոմ. 5:3-4, 8:17-18, 1 Պետ. 1:6-9, 2:11, 4:12-17, 5:10):

Բ. Հոգևոր պատերազմը հնարավոր է համատեքստորեն կապված լինել Եփես. 5:18-ի ներկա կրավորական հրամայականի՝ «Հոգով լցվեք» և ներկա կրավորական (կամ չեզոք. տես՝ Եփես.5:22-ի գրառումը) հրամայականի՝ «զորացե՛ք Տիրոջով», 6:10-ի խոսքի հետ: Ինչպես որ լեցունությունը կապված է ամենօրյա Քրիստոսակերպության հետ (Կող. 3:16), այնպես էլ հոգևոր պատերազմն է: Մարդիկ Աստծո համար առաջնայնություն են: Պատերազմի դաշտը ամենօրյա հիմունքներով միջանձնային փոխհարաբերություններ են: Միայն մարդիկ են հավիտենական: Չնայած որ այս կրավորականները խոսում են Աստծո զորության մասին, Քրիստոնյան պետք է թույլ տա Հոգուն, որպեսզի գործի իր կյանքում: Ուխտը ներառում է երկու կողմերին էլ, երկու ընտրություններն էլ:

Գ. Մենք պետք է զգույշ լինենք երկու ծայրահեղությունից՝ (1) որ ամեն բան Սատանայի պատճառով է լինում, և (2) անձնական չարք գոյություն չունի: Ես ենթադրում եմ ՀԿ-յան միաստվածության պատճառով է, որ Սատանան ստեղծված արարած է և վերահսկելի է (տես՝ 3 Թագ.22:19-23, Հոբ 1-2, Զաք. 3:1-5): Նա ո՛չ ամենուր է, ո՛չ էլ ամենագետ: Սատանան ավելի շուտ նշվեց նաև Եփես. 2:2 և 4:14, 27-ում: Նա հանդիսանում է Քրիստոնյաների երեք թշնամիներից միայն մեկը, որոնց հետ ամեն օր բախվում են՝ աշխարհը, Սատանան (և իրենները) և մարմինը (տես՝ Եփես. 2:2-3, Հակոբոս 4):

Դ. Աստված ապահովում է մեր հոգևոր սպառազինությունը և զենքերը, սակայն հավատացյալները պետք է (1) գիտակցեն, որ ամեն օր պատերազմի մեջ են և (2) հավատքով օգտվեն Աստծո ռեսուրսներից և ապա (3) կանգնեն (տես՝ Եփես. 6:11,13,14): Հոգևոր հասունությունը ինքնաբերաբար տեղի չի ունենում, ոչ էլ հիմնված է երկարակեցության, IQ-ի վրա (այսինքն՝ խելացիության), կամ մարդու ունեցած պարգևների:

Ե. 21-22 համարները գրեթե նույնն են ինչ Կող. 4:7-8: Սա ևս մեկ հավելյալ ապացույց է այն բանի, որ այս երկու գրքերն իրար սերտորեն կապված են: Սակայն հետաքրքիր է, որ հոգևոր պատերազմի վերաբերյալ ամբողջ քննարկումը բացակայում է Կողոսացիներում: Յուրաքանչյուր գիրք ունի իր յուրահատկությունը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6:10-17

10Վերջապես, եղբայրնե՛րս, ուժե՛ղ եղեք Տիրոջով և Նրա զորության կարողությամբ: 11Ձեր վրա հագեք Աստծո սպառազինությունը, որ կարողանաք ընդդիմանալ Սատանայի հնարքներին: 12Որովհետև մենք մարմնի և արյան հետ չենք պատերազմում, այլ՝ իշխանությունների դեմ, զորությունների դեմ, այս աշխարհի խավարի իշխանների և բարձր տեղերում եղող հոգևոր չարության դեմ: 13Դրա համար սպառազինվե՛ք Աստծո ամբողջ սպառազինությամբ, որպեսզի չար օրում կարողանաք դիմադրել, և այս ամենը կատարելուց հետո կանգնել: 14Ուստի կանգնեցե՛ք՝ ձեր մեջքերը ճշմարտությամբ գոտեպնդելով և արդարության զրահը հագնելով, 15ձեր ոտքերին հագեք խաղաղության ավետարանի պատ-

բաստությունը. [16]Եվ այս բոլորի վրա առեք հավատի վահանը, որով կկարողանաք հանգցնել Չարի կրակոտ նետերը [17]և վերցրե՛ք փրկության սաղավարտը և Հոգու սուրը, որ Աստծո Խոսքն է.

6:10 «Վերջապես» Բառացի սա նշանակում է «մնացածի համար»: Սա Պողոսին հատկանշական արտահայտություն է, որից կարելի է ենթադրել, որ պատրաստվում է իր նամակն ավարտել (տես՝ 2 Կորնթ. 13:11, Փիլ. 3:1, 4:8, 1 Թեսաղ. 4:1, 2 Թեսաղ. 3:1): Այն սովորաբար մատնանշում է նոր թեմայի անցում:

❖ **«ուժե՛ղ եղեք Տիրոջով»** Սա կա՛մ ներկա կրավորական հրամայական է՝ «զորացե՛ք», կա՛մ էլ ներկա չեզոք հրամայական՝ «ուժեղ եղե՛ք»: Քերականական ձևը նույնն է, միայն գործողությունն է տարբեր: Աստվածաբանությունը պարզ է. հավատացյալները պետք է շարունակեն թույլ տալ Սուրբ Հոգուն զորացնելու իրենց՝ հոգևոր շարունակական պայքարի համար (տես՝ Եփես. 3:20, 1 Կորնթ. 16:13): Կրավորական սեռի (Աստծո զորությունը հոսում է հավատացյալների միջով) և չեզոք սեռի (հավատացյալները ակտիվ կերպով ներգրավված են Քրիստոսի համար ապրելու գործընթացին) միջև այս պարադոքսը բարբառային լարվածությունն է, որ կարելի է տեսնել ամբողջ Աստվածաշնչի բովանդակության մեջ: Հիմնականում սա ուխտի փոխհարաբերության լարվածությունն է (տես՝ Փիլ.2:12-13): Աստված է միշտ նախաձեռնողը, Նա է ծրագրողը, սակայն Նա նաև որոշել է, որ մարդիկ պետք է արձագանքեն՝ պատասխանեն (սկզբում և անընդհատ): Երբեմն Աստվածաշունչը շեշտադրում է մարդկության պատասխանը (Եզեկ. 18:31, «Նոր սիրտ ու նոր հոգի ստացե՛ք») և երբեմն Աստծո հոգածությունը՝ մատակարարումը (տես՝ Եզեկ. 36:26-27. «Ես ձեզ նոր սիրտ կտամ և նոր հոգի կդնեմ ձեր մեջ»): Երկուսն էլ ճիշտ են:

Եփես. 1:10-ում չորս հունարեն տերմիններ են կիրառվում (*dunamis*=իշխանություն, *energeia* = էներգիա, *kratos*=ուժ և *ischus*=զորություն), որոնք նկարագրում են Աստծո զորությունը Քրիստոսում: Այստեղ կիրառվել են այս չորս տերմիններից երեքը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԶՈՐԱՑԵՔ
SPECIAL TOPIC: BE MADE STRONG

Այս տերմինը (*krataioō*) ՆԿ-ում կրավորական սեռով կիրառվում է տարբեր իմաստներով՝

1. Հիսուսի որպես մարդ զարգանալու իմաստով՝ Ղուկաս 1:80, 2:40
2. հավատացյալների Սուրբ Հոգով զորանալու իմաստով՝ Եփես. 3:16
3. Կորնթոսի եկեղեցու ներսում հավատացյալները իրենց պայքարները դիմակայելու հարցում հավատքի մեջ ամրապնդվելու և հաստատվելու իմաստով՝ 1 Կորնթ. 16:13:

❖ **«Նրա զորության կարողությամբ»** ՅԱՀՎԵՆ հաճախ նկարագրվում է ՀԿ-ում որպես զինված պատերազմող (տես՝ Ես. 42:13, 49:24-25, 52:10 և հատկապես 59:16-17): Դա Նրա զենքերն են և ոչ թե մերը: Մեր հաղթանակը Նրա մեջ է (տես՝ Փիլ. 2:13), սակայն մենք պետք է համագործակցենք (տես՝ Փիլ. 2:12):

6:11 «ձեր վրա հագեք Աստծո /լրիվ/ սպառազինությունը» Սա անորոշ կատարյալ չեզոք հրամայական է, որը փոխանցում է հրատապության իմաստ (տես՝ Եփես. 6:13): Սա հավատացյալի կամքի վճռական դրսևորում է: Աստված ապահովել է մեզ անհրաժեշտ հոգևոր զենքերով, սակայն մենք պետք է գիտակցենք այդ կարիքը և օգտվենք Աստծո հոգածությունից՝ կիրառելով այն մեր ամենօրյա կյանքում (տես՝ 1 Թեսաղ. 5:8): Արդարացումը (Հռոմեացիների 4, 6) չի ապահովում ազատագրում հոգևոր պայքարից և փորձությունից (տես՝ Հռոմեացիների 7): «Նոր մարդու» ներկայությունը չի ենթադրում «հին մարդու» լիարժեք վերացում: Հաճախ այդ պատերազմը սրվում

է՝ թեժանում: Եթե Սատանան չի կարողանում մեզ հետ պահել փրկվելուց, նա փորձելու է մեզ պահել հոգևորապես պարտված և պապանձված:

❖ **«որ կարողանաք ընդդիմանալ /հաստատ կանգնել/»** Սա ներկա կրավորական անորոշ է՝ անդեմ ներգործական անորոշով, որը վերաբերում է ամենօրյա պայքարին, ոչ թե միայն մեկ վճռական «պատերազմի» կամ փորձության (սա նման է Ղուկաս 4:13-ում Հիսուսի փորձությանը, որտեղ Սատանան հեռանում է մինչև ավելի հարմար առիթ կունենա): «Կանգնել» տերմինը ռազմական տերմին է՝ դիրքը պահելու իմաստով: Եփես.6:13 և 14-ում այն կրկնվում է: Սա է հավատացյալի սպառազինության գլխավոր նպատակը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆԳՆԵԼ (*histemi*)
SPECIAL TOPIC: STAND (*histemi*)

Նոր Կտակարանում այս տերմինը ընդհանուր առմամբ մի քանի նշանակությամբ է կիրառվում՝

1. հաստատել՝
   ա. ՀԿ Օրենքը՝ Հռոմ.3:31
   բ. մարդու սեփական արդարությունը՝ Հռոմ.10:3
   գ. նոր ուխտը՝ Եբր.10:9
   դ. մեղադրանքը՝ 2 Կորնթ.13:1
   ե. Աստծո ճշմարտությունը՝ 2 Տիմ.2:19
2. հոգևոր հակառակվել՝
   ա. սատանային՝ Եփես.6:11
   բ. դատաստանի օրը՝ Հայտն.6:17
3. հակառակվել ամուր դիրքի վրա կանգնած՝
   ա. ռազմական փոխաբերություն՝ Եփես.6:14
   բ. քաղաքացիական փոխաբերություն՝ Հռոմ.14:4
4. ճշմարտության մեջ դիրքը՝ Հովհ.8:44
5. շնորհքի մեջ դիրքը
   ա. Հռոմ.5:2
   բ. 1 Կորնթ.15:1
   գ. 1 Պետ.5:12
6. հավատքի մեջ դիրքը՝
   ա. Հռոմ.11:20
   բ. 1 Կորնթ.7:37
   գ. 1 Կորնթ.15:1
   դ. 2 Կորնթ.1:24
7. ամբարտավանության դիրքը՝ 1 Կորնթ.10:12

Այս տերմինն արտահայտում է ինքնիշխան Աստծո ուխտի շնորհքն ու ողորմությունը և այն փաստը, որ հավատացյալները կարիք ունեն դրան հավատքով արձագանքելու և հարելու: Երկուսն էլ սուրբգրային ճշմարտություններ են: Դրանք պետք է միասին պահվեն: Տե՛ս <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՐԱԴՈՔՍԸ</u>:

NASB	**«սատանայի հնարքների դեմ»**
NKJV, NRSV	**«սատանայի խորամանկության դեմ»**
TEV	**«սատանայի չար խաբեությունների դեմ»**
NJB	**«սատանայի մարտավարությանը»**

Քրիստոնյաները հարձակման են ենթարկվում հրեշտակ փորձիչի՝ Սատանայի կողմից (տես՝ Եփես. 2:2, 4:14, 27, 2 Կորնթ. 2:11, 1 Պետ. 5:8-9): Սատանան օգտագործում է բազմաթիվ հնարքներ (*methodia*)՝

1. բաժանումներ
2. անձնական մեղք
3. սուտ վարդապետներ
4. հուսահատություն
5. ատելություն
6. չարչարանք

Սրանք դեռ մի քանի բաներն են, որոնց հետ բախվել էին այս նամակը ստացողները: Սակայն հավատացյալները չեն կարող վերագրել բոլոր մեղքերը և խնդիրները հրեշտակային փորձությանը կամ հարձակմանը: Մեղավոր մարդկությունը՝ անգամ փրկված մեղավոր մարդիկ, դիմակայում են (1) իրենց մեջ ապրող մեղսալի բնությանը, (2) ընկած աշխարհի համակարգին, և (3) հրեշտակային և դիվական հարձակմանը (տես՝ Եփես. 2:2-3, Հակ. 4:1,4,7): Պատերազմը սկսում է մտքում, սակայն արագ կերպով անցնում է մեղավոր գործերին: <u>Հատուկ Թեմա. Անձնական Չարք</u>-ի համար տե՛ս 2:2-ը:

Ուշադրություն դարձրեք, թե քանի անգամ է «դեմ, հակառակ» բառը հայտնվում այս համատեքստում (մեկ անգամ h. 11-ում և չորս անգամ՝ Եփես. 6:12-ում): Սատանայի զենքերը խափանված են Աստծո սպառազինության զենքերով:

6:12

NASB, NRSV	**«մեր պայքարը չէ»**
NKJV	**«մենք չենք գոտեմարտում»**
TEV	**«մենք չենք կռվում. . . դեմ»**
NJB	**«մենք պետք է կռվենք»**

Սա ներկա ժամանակի բայ է, որը ենթադրում է շարունակվող պայքար, ոչ թե մեկանգամյա փորձություն: Սա կա՛մ ռազմական, կա՛մ էլ մարզական փոխաբերություն է: Բառացի սա վերաբերում է ձեռք-ձեռքի կռվել: Քրիստոնեական կյանքը ծանր է՝ դժվարին: Քրիստոնեական կյանքը գերբնական պարգև է, որը ապրում են ապաշխարությամբ և հավատքով, ինչպես փրկությունը:

❖ **«մարմնի և արյան դեմ»** Բառերի հերթականությունը իրականում «արյուն և մարմին» է: Ուշադրություն դարձրեք այս տերմինների հերթականությանը: Այն կարելի է միայն այստեղ գտնել և Եբր. 2:14-ում: Պատճառն անհայտ է, սակայն հնարավոր է, որ կապ ունի գնոստիկ սուտ վարդապետների կողմից ֆիզիկականի թերագնահատման հետ (Հիսուսի մարդեղությունը): Հավատացյալները պետք է հիշեն, որ հոգևոր խնդիրը մեղքն է, չարը, Սատանան, ոչ թե այլ մարդկանց հետ մրցակցությունը:

❖ **«իշխանությունների դեմ, զորությունների դեմ»** Այս տերմինները կարող են կիրառվել մարդկային իշխանությունների համար, ինչպես օրինակ Հռոմ. 13:1-7-ում, սակայն այստեղ՝ այս համատեքստը պահանջում է իշխանությունների (տես՝ Հռոմ. 8:38-39, 1 Կորնթ. 2:8, Կող. 1:16, 2:10,15, Եփես. 1:21, 3:10, 1 Պետ. 3:22) հրեշտակային կարգեր (*aeons*): Սա գնոստիկ սուտ վարդապետների աշխարհայացքի մի մասն էր կազմում: Այս հրեշտակային կարգերը (*աէոններր*) կարող են լինել՝

1. չարք, այսինքն՝ Սատանայի հսկողության ներքո գտնվող ընկած հրեշտակները՝ դևերը
2. հրեշտակային իշխանությունները, որոնք կոչվում են *stoichea,* որոնք պարտադիր չի լինեն չար (տես՝ Գաղ. 4:3,9, Կող. 2:8):

Այս թեմայի շուրջ լավ քննարկման համար տե՛ս Հենդրիկ Բերխոֆի *Քրիստոսը և զորությունները* (Հերալդ Հրատարակչություն):

«Իշխաններ» տերմինի համար տե՛ս <u>Հատուկ Թեմա. *ARCHĒ*</u>, Կող. 1:16-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐՈՒՄ
SPECIAL TOPIC: ANGELS IN PAUL'S WRITINGS

Ռաբբիները մտածում էին, որ հրեշտակները նախանձում են, որ Աստված սիրում և ուշադրություն է դարձնում (այսինքն՝ Սինա լեռան վրա Նրա Օրենքի հանձնումը) մեղավոր մարդկությանը, և հետևաբար, թշնամաբար է վերաբերվում իրենց հանդեպ: Գնոստիկ սուտ վարդապետները պնդում էին, որ փրկությունը հասանելի է միայն հրեշտակային ոլորտների միջոցով ծածկագրերի վերծանմամբ (տես՝ Կողոսացիների և Եփեսացիների թղթերը), որոնք առաջնորդում են բարձրյալ, բարի աստծո մոտ:

Ջորջ Էլդոն Լեդդը իր *Նոր Կտակարանի Աստվածաբանություն* գրքում /George Eldon Ladd *A Theology of the New Testament*/տալիս է հրեշտակների համար Պողոսի կողմից կիրառված տերմինների մի լավ ամփոփ ցանկ.

«Պողոսն անդրադառնում է ոչ միայն լավ և վատ հրեշտակներին, Սատանային և դևերին. նա օգտագործում է բառերի մեկ այլ խումբ, որոնվ մատնանշում է հրեշտակային հոգիների աստիճանները: Տերմինաբանությունն այսպիսին է՝

«Իշխել» [*archē*], 1 Կորնթ. 15:24, Եփես. 1:21, Կող. 2:10
«Իշխաններ» [*archai*; RSV, «իշխանություններ»], Եփես. 3:10, 6:12, Կող. 1:16, 2:15, Հռոմ. 8:38
«Իշխանություն» [*exousia*], 1 Կորնթ. 15:24, Եփես. 1:21, Կող. 2:10
«Իշխանություններ» [*exousiai,* RSV, «իշխանություններ»], Եփես. 1:21
«Զորություն» [*dynamis*], 1 Կորնթ. 15:24, Եփես. 1:21
«Զորություններ» [*dynameis*], Հռոմ. 8:38
«Գահեր» [*thronoi*], Կող. 1:16
«Տերություն» [*kyriotēs*; RSV, «տիրակալություն»], Եփես. 1:21
«Տերություններ» [*kyriotētes*], Կող. 1:16
«Այս խավարի աշխարհի իշխաններ», Եփես. 6:12
«Երկնավորներում եղող հոգևոր չարություն (զորքեր)», Եփես. 6:12
«Խավարի իշխանությունը», Կող. 1:13
«Ամեն մի անունից», Եփես. 1:21
«Երկնային, երկրավոր և սանդարամետական էակներ», Փիլ. 2:10» (էջ՝ 401)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ԵՎ ԴԵՎԵՐ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԵՎԵՐԸ
SPECIAL TOPIC: ANGELS AND DEMONS

Ա. Հնում մարդիկ անիմիստներ են եղել: Նրանք անձի բնավորության գծերը վերագրում էին բնության ուժերին, կենդանիներին և բնության հետ կապված առարկաներին: Կյանքը բացատրվում էր մարդկության հետ այս հոգևոր էությունների փոխազդեցության միջոցով:

Բ. Ժամանակի ընթացքում այս անձնավորումը դարձավ պոլիթեիզմ (բազմաստվածություն): Սովորաբար դիվականը (*genii*) ավելի փոքր աստվածներ կամ դիվաստվածներ (բարի կամ չար) էին, որոնք ազդում էին անհատ մարդկային կյանքերի վրա:

1. Միջագետք՝ քաոս և ընդհարում
2. Եգիպտոս՝ կարգուկանոն և գործողություն
3. Քանան, տես՝ Վ. Ֆ. Օլբրայթի *Հնագիտությունը և Իսրայելի կրոնը,* Հինգերորդ Խմբագրություն, էջ՝ 67-92 /W. F. Albright's *Archaeology and the Religion of Israel,* Fifth Edition, pp.67-92/

Գ. ՀԿ-ը չի անդրադառնում կամ զարգացնում ավելի ցածր աստվածների, հրեշտակների կամ դևերի թեման, հավանաբար իր խիստ միաստվածության պատճառով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, տես՝ Ելից 8:10, 9:14, 15:11, 2 Օր.4:35,39, 6:4, 33:26, Սաղմ.35:10, 71:19, 86:8, Ես.46:9, Երեմ.10:6-7, Միք.7:18): Այն նշում է հեթանոս ազգերի սուտ աստվածներին (*Shedim,* BDB 993, տես՝ 2 Օրին.32:17, Սաղմ.106:37) և անվանում կամ անձնավորում է դրանցից մի քանիսին:

1. *Se'im* (այծամարդ կամ մազոտ դև, BDB 972 III, KB 1341 III, տես՝ Ղևտ.17:7, 2 Մնաց.11:15, Ես.13:21, 34:14):
2. *Lilith* (իգական սեռի, գայթակղիչ գիշերային դև, BDB 539, KB 528, տես՝ Ես.34:14)
3. *Mavet* (մահվան համար կիրառվող եբրայերեն տերմին, որ գործածում էին Քանանի սանդարամետ աստծո համար, *Mot,* BDB 560, KB 560, տես՝ Ես.28:15, 18, Երեմ.9:21, և հավանաբար 2 Օր.28:22):
4. *Resheph* (աղետ, կրակ կամ կարկուտ, BDB 958, KB 958, տես՝ 2 Օր.32:24, Սաղմ.78:48, Ամբ.3:5)
5. *Dever* (ժանտամահ, BDB 184, տես՝ Սաղմ.91:5-6, Ամբ.3:5)
6. *Az'azel* (անունն անհայտ է, սակայն հավանաբար անապատային դև է կամ տեղանուն, BDB 736, KB 736, տես՝ Ղևտ.16:8,10,26):

(Այս օրինակները վերցված են *Հուդայիկա Հանրագիտարանից,* հատոր 5, էջ՝ 1523 /*Encyclopaedia Judaica,* vol.5, p.1523/)

Այնուամենայնիվ ՀԿ-ում գոյություն չունի դուալիզմ կամ ՅԱՀՎԵԻ ից անկախ վիճակ: Սատանան ՅԱՀՎԵԻ ծառաներից մեկն է (տես՝ Հոբ 1-2, Զաքարիա 3), և անկախ, ինքնիշխան թշնամի չէ (տես՝ Ա. Բ. Դեյվիդսոն, *Հին Կտակարանի Աստվածաբանություն,* էջ՝ 300-306 /A. B. Davidson, *A Theology of the Old Testament*/):

Դ. Հուդայականությունը զարգացավ Բաբելոնյան գերության (Ք.Ա. 586-538թթ) ընթացքում: Այն աստվածաբանորեն ազդեցության ենթարկվեց պարսկական Զրադաշտականության անձնավորված դուալիզմի կողմից՝ բարձրյալ աստծո, որ կոչվում էր *Mazda* կամ *Ormazd* և *Ahriman* կոչվող չար մրցակցի: Սա թույլ տրվեց հետգերության Հուդայականության ընթացքում՝ ՅԱՀՎԵԻ և Իր հրեշտակների, և Սատանայի ու իր հրեշտակների կամ դևերի միջև անձնավորված դուալիզմը:

Հուդայականության մեջ անձնավորված չարի աստվածաբանությունը բացատրվում է և լավագույնս արձանագրված է Ալֆրեդ Էդերշեյմի *Հիսուս Մեսիայի Կյանքը և Ժամանակները,* հատոր 2, հավելված XIII (էջ՝ 749-863) և XVI (էջ՝ 770-776) /Alfred Edersheim's *The Life and Times of Jesus the Messiah*/: Հուդայականությունը չարին երեք կերպով է անձնավորում՝

1. Սատանա կամ *Sammael*
2. չար մտադրություն (*yetzer hara*) մարդկանց մեջ
3. Մահվան Հրեշտակը

   Էդերշեյմը սրանք բնութագրում է որպես՝

   1. Բանսարկու
   2. Փորձիչ
   3. Պատժող (հատոր 2, էջ՝ 756)

Գոյություն ունի չարի ներկայացման և բացատրության ակնհայտ աստվածաբանական տարբերություն հետզերության և ՆԿ-յան Հուդայականության միջև:

Ե. ՆԿ-ը, հատկապես Ավետարանները, հաստատում են հոգևոր չար էակների գոյությունը և հակառակությունը մարդկության և ՅԱՀՎԵԻ հանդեպ (Հուդայականության մեջ, Սատանան մարդկության թշնամին էր, բայց ոչ Աստծո): Նրանք հակառակվում են Աստծո կամքին, իշխանությանը և թագավորությանը:

Հիսուսը հակառակվեց և մարդկանց միջից դուրս քշեց այս դիվական էակներին, նաև նրանց անվանեց (1) անմաքուր՝ պիղծ ոգիներ (տես՝ Ղուկ.4:36, 6:18) կամ (2) չար ոգիներ (տես՝ Ղուկ.7:21, 8:2): Հիսուսը հստակ տարբերություն էր դնում հիվանդության (ֆիզիկական և մտավոր) և դիվականի միջև: Նա Իր իշխանությունը և հոգևոր աշխարհընկալումը ցուցադրեց՝ ճանաչելով և դուրս քշելով այս չար ոգիներին: Նրանք հաճախ ճանաչում էին Նրան և փորձում էին դիմել Նրան, սակայն Հիսուսը մերժում էր նրանց վկայությունը՝ պահանջելով, որ լռեն, և վտարում էր նրանց: Դևեր քշելը Սատանայի թագավորության պարտության նշան է:

Այս թեմայի շուրջ զարմանալիորեն ՆԿ-ի Առաքելական նամակներում տեղեկության պակաս կա: Դևեր քշելը երբեք չի թվարկվում որպես հոգևոր պարգև, ոչ էլ դրա համար տրված է որևէ մեթոդաբանություն կամ ընթացակարգ, ծառայող հաջորդ սերունդների կամ հավատացյալների համար:

Զ. Չարը իրական է, չարը անձնավորություն է, չարը կա: Ո՛չ դրա ծագումը, և ո՛չ էլ նպատակը հայտնի չէ: Աստվածաշունչը հաստատում է դրա իրականությունը և կոշտ կերպով հակառակվում է դրա ազդեցությանը: Իրականության մեջ գոյություն չունի վերջնական դուալիզմ: Աստված է վերահսկում կատարելապես. չարը պարտության է մատնված և դատապարտված և հեռացվելու է ստեղծագործության միջից:

Է. Աստծո ժողովուրդը պետք է հակառակվի չարին (տես՝ Հակոբոս 4:7): Նրանք չեն կարող վերահսկվեն չարի կողմից (տես՝ 1 Հովհ.5:18), այլ կարող են փորձվել և իրենց վկայությունն ու ազդեցությունը աղավաղեն (տես՝ Եփես.6:10-18): Չարը Քրիստոնյայի աշխարհայացքի բացահայտված մաս է: Ժամանակակից Քրիստոնյաները իրավունք չունեն վերասահմանելու չարին (Ռուդոլֆ Բոլթմեննի ապաառասպելականացումը), ապաանձնավորելու չարին (Փոլ Թիլլիչի սոցիալական կառուցվածքը), ո՛չ էլ փորձելու բացատրել այն լրիվ ֆիզիկական տերմիններով (Զիգմունդ Ֆրոյդ): Դրա ազդեցությունը համատարած է, սակայն պարտության մատնված: Հավատացյալները կարիք ունեն քայլելու Քրիստոսի հաղթության մեջ:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՏԱՆԱ</u>

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ (ՀԿ)</u>

NASB	**«այս աշխարհի խավար ուժերի դեմ»**
NKJV	**«այս դարի խավարի իշխանների դեմ»**
NRSV	**«ներկայիս խավարի տիեզերական զորությունների դեմ»**
TEV	**«այս խավար դարի տիեզերական զորությունների դեմ»**
NJB	**«երկինքներում չարի հոգևոր բանակի դեմ»**

Սա *kosmocrator* հունարեն տերմինն է իր հոգնակի թվով: Այս տերմինը կիրառվում է հունարեն դասականներում և հրեա ռաբբիների գրքերում՝ նկարագրելու մեկին, որը տարված է համաշխարհային վերահսկողությամբ: Սա կարծես թե խոսում է Սատանայի (տես՝ Հովհ. 12:31, 14:30, 2 Կորնթ.4:4, Եփես.2:2) և դիվականի մասին (տես՝ 1 Կորնթ.2:6,8, 15:24, Եփես.3:10, 6:12, Կող.2:15):

❖ **«հոգևոր չարության դեմ»** Այս արտահայտությունը Պողոսի օրոք կիրառվում էր աստղագետների կողմից, որոնք հավատում էին, որ յուրաքանչյուր երկնային մարմնի ետևում գոյություն ունեն հրեշտակներ կամ աստվածներ (տես՝ Հռոմ. 8:39), որոնք ազդում էին մարդկային կյանքերի վրա (կենդանակերպը): Այս ամեն ինչը սկսվել է Բաբելոնյան աստղագիտությունից: Սա դեռևս կա և գործում է աշխարհում (հորոսկոպը):

NASB, NKJV, NRSV	**«երկնային տեղերում»**
TEV	**«երկնային աշխարհում»**
NJB	**«երկինքներում»**

Այս ներգոյական (ոլորտի) չեզոք հոգնակի ածականը՝ «երկնային տեղերում», կիրառվում է միայն Եփեսացիներում (տես՝ Եփես. 1:20, 2:6, 3:10, 6:12): Այս տերմինի կիրառության բոլոր համատեքստերից (հատկապես 3:10 և 6:12) կարելի է հասկանալ, որ այն նկատի ունի հոգևոր այն տիրույթը, որտեղ հավատացյալներն ապրում են այստեղ և հիմա, ոչ թե գալիք երկինքը:

6:13 «սպառազինվե՛ք Աստծո ամբողջ սպառազինությամբ» Սա անորոշ կատարյալ ներգործական հրամայական է, որը ցույց է տալիս վճռական գործողության անհրաժեշտություն (տես՝ հ. 11): Սա մեկ այլ ռազմական տերմին է: Հավանաբար ակնարկ Ես. 59:17-ից՝ ՅԱՀՎԵՆ որպես պատերազմող: Սպառազինությունը նշվում է ըստ այն հերթականության, որով զինվորը պետք է հագնվեր (հիշեք, որ Պողոսն այս նամակը գրում է բանտից, որտեղ շղթայված էր երկու հռոմեացի զինվորների):

Ուշադրություն դարձրեք, որ այս սպառազինությունը Աստծո զենքերն են: Նա է ապահովում, սակայն հավատացյալները պետք է գիտակցեն պատերազմը և կիրառեն Աստծո կողմից տրված բավարար զենքերը:

❖ **«կարողանաք դիմադրել»** Սա անորոշ կատարյալ կրավորական (դեպոնենտ) ստորադասական է, անդեմ ներգործական անորոշ դերբայով (կոյնե հունարենում): Գոյություն ունի հոգևոր պատերազմ թե՛ դարձից առաջ և թե՛ հետո: Որոշ հավատացյալներ չգիտեն, որ գոյություն ունի անդադար շարունակվող հոգևոր պայքար. նրանք չեն վերցնում Աստծո սպառազինությունը և չեն դիմադրում: Տերմինաբանությունը նույնն է Հակոբոս 4:7-ում և 1 Պետ. 5:9-ում: Քրիստոնեյաները կարող են պարտվել կամ վնասել իրենց խաղաղությունը, վստահությունը, և պարգևներով ծառայությունը (1) տգիտության պատճառով, (2) անտեսելու և / կամ (3) մեղքի պատճառով (տես՝ 1 Կորնթ. 9:27, 15:2, Գաղ. 2:2, 3:4, Փիլ. 2:16, 1 Տիմ. 1:19): Սա չի վերաբերում երկնքին կամ դժոխքին, այլ արքայության համար արդյունավետ ծառայությանը:

❖ **«չար օրում»** Սա ՀԿ-յան դարձվածք է, որը կարող է վերաբերել (1) փորձության օրվան, (2) ամբողջ այն չար դարաշրջանին, որում ապրում ենք, կամ (3) հակառակության օրվան (տես՝ Սաղմ. 49:5բ):

❖ **«այս ամենը կատարելուց հետո»** Այս տերմինն ունի մարդու կողմից իրեն պահանջված ամեն բանը կատարելու նշանակությունը: Պողոսն այս տերմինն իր թղթերում օգտագործում է ավելի քան տասնութ անգամ: Հոգևոր տիրույթում (1) պատրաստվածությունը, (2) հարատևությունը և (3) գիտելիքները կենսական կարևորության են:

❖ **«հաստատ կանգնել»** Սա անդեմ ներգործական անորոշ է, որը նշանակում է «ամուր կանգնել»: Այս նույն տերմինը կիրառվում է Եփես. 6:11-ում (ներկա կրավորական անորոշ) և 14-ում (անդեմ նորգործական հրամայական): Հավատացյալներին հրամայված է և քաջալերվում է դիմակայել, հաղթել և հաստատ կանգնել չարի հնարքների դեմ (տես՝ Եփես. 4:14): Սա կատարվում է հետևյալ միջոցներով՝

1. հավատացյալի ավետարանի գիտելիքների (փրկության սաղավարտը և Հոգու սուրը, Եփես. 6:17):
2. հավատացյալի դիրքը Քրիստոսի մեջ
3. հավատացյալների զիջողականությունը իրենց ներսում բնակվող Հոգուն
4. հավատացյալների կողմից Աստծուց տրամադրված զենքերի օգտագործումը
5. հավատացյալի վճռական որոշումներն ու գործողությունները
6. աղոթքը (տես՝ Եփես. 6:18):

Տե՛ս Հատուկ Թեմա. Կանգնել, Եփես. 6:11-ում:

6:14 Հետևյալ չորս դերբայներից երեքը վերցված են Եսայի մարգարեության տարբեր հատվածներից: Դրանք բոլորն էլ քերականորեն կապ ունեն այս անդեմ ներգործական հրամայականի հետ՝ «կանգնե՛ք», Եփես. 6:13 (այս կազմությունը նման է Ղուկ. 5:18-ին, հրամայական, որին հետևում է հինգ դերբայ, 5:9-21):

1. «**գոտեպնդելով**» անդեմ չեզոք դերբայ (Եփես. 6:14): Սա մեջբերում է Ես. 11:5-ից, որտեղ այն կիրառվում է Մեսիայի համար:
2. «**հագնելով**» անդեմ չեզոք դերբայ (Եփես. 6:14): Սա մեջբերում է Ես. 59:17-ից, որտեղ այն կիրառվում է Աստծո համար որպես մեղավոր Իսրայելի համար պատերազմող (տես՝ Եփես. 59:12):
3. «**կոշիկներ հագնելով**» անդեմ չեզոք դերբայ (Եփես. 6:15): Սա մեջբերում է Ես. 52:7-ից, որտեղ Տերը գալիս է Իր ժողովրդի մոտ որպես բարի լուր բերող Թագավոր (տես՝ Ես. 61:1)
4. «**առնելով**» անդեմ ներգործական դերբայ (Եփես. 6:16, տես՝ Եփես. 6:13): Սա ակնարկվում է Ես. 59:17-ում: Այն ինչ Աստված ապահովում է մեր համար, պետք է գործադրվեն մեր ամենօրյա կյանքում:

❖ **«ճշմարտություն»** Հունարենում հոդ չկա, այնպես որ այն կարող է թարգմանվել ՀԿ-յան նշանակությամբ՝ «ճշմարտացիություն» կամ «վստահելիություն»: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 1:13-ում:

❖ **«զրահը»** Սա Ես. 59:17-ում թվարկված սպառազինության մի մասն է, ինչպես և Եփես. 6:17-ի սաղավարտը:

❖ **«արդարության»** Սա վերաբերում է Քրիստոսի արդարությանը (տես՝ 2 Կորնթ. 5:21): Սակայն ինչպես որ Եփես. 6:10-ում զորանալու հետ կապված բարբառային լարվածությունը, թե՛ Քրիստոսի արդարությունը մեր մեջ (արդարացումն ու սրբացումը որպես վիճակ՝ դիրք) և թե՛ Նրա հետևորդների կատարելագործվող Քրիստոսակերպությունն է (զարգացող սրբացում), որ ամենօրյա հոգևոր պայքարում հաղթանակ է բերում: Տե՛ս Հատուկ Թեմա, Եփես. 4:24-ում:

6:15 «ձեր ոտքերին հագեք խաղաղության ավետարանի կոշիկները» Սա կա՛մ վերաբերում է (1) պատրաստությանը (տես՝ Ես. 52:7) կա՛մ էլ (2) հաստատ հիմքին (տես՝ NEB թարգմանությունը): Հավատացյալները պետք է պատրաստ լինեն հոգևոր պատերազմի համար, որը հաստատ գալու է:

6:16 «այս բոլորի վրա» KJV տարբերակը թարգմանում է սա որպես «ամեն ինչից վեր», սակայն նշանակում է՝ վերը նշված զինվորական պատերազմի զենքերին ավելացրած:

❖ **«վահանը»** Այս տերմինը կապված է հունարեն «դուռ» բառի հետ: Այն վերաբերում է մեծ չափսերի (4 ինչը 2 ինչի վրա) ամբողջ մարմինը ծածկող վահանին: Այն պատրաստվում էր փայտից, որը ծածկվում էր կաշվով՝ եզրագծված մետաղով: Պատերազմից առաջ այն ընկղմվում էր ջրի մեջ, որպեսզի հնարավոր լիներ հանգցնել կրակոտ ծայրերով նետերը: Այն լիարժեք պաշտպանության խորհրդանիշ էր:

❖ **«կրակոտ նետերը»** Սա վերաբերում է ձյութի մեջ թաթախված և վառած նետերին: Սրանք հոգևոր հարձակումների փոխաբերությունն են:

❖ **«Չարի»** Այստեղ անորոշություն կա, արդյո՞ք սա վերաբերում է ընդհանրապես չարին (չեզոք սեռ), թե՞ մասնավորապես Սատանային (արական սեռ): Այս նույն անորոշությունը կարելի է տեսնել Մատթ. 5:37, 6:13, 13:38, Հովհ. 17:15, 2 Թեսաղ. 3:3, 1 Հովհ. 2:13-14-ում: Հունարենում այս բառի ձևը նույնն է (հետևաբար, սեռը կարող է պարզվել միայն կոնտեքստով): Մատթ. 13:19, 1 Հովհ. 5:18-19-ում ակնհայտ է, որ վերաբերում է Սատանային (տես՝ Հատուկ Թեմա Եփես. 2:2-ում):

6:17 «վերցրե՛ք փրկության սաղավարտը» Սա անդեմ չեզոք (դեպոնենտ) հրամայական է: Սա խորհրդանշում է հավատացյալների ավետարանի գիտությունը և Քրիստոսում իրենց ունեցած հույսը (տես՝ 1 Թեսաղ. 5:8):

❖ **«Հոգու սուրը, որ Աստծո Խոսքն է»** Պողոսը հատուկ սահմանում է հավատացյալների հարձակվողական զենքերը (այսինքն՝ Աստվածաշնչյան գիտությունը և աղոթքը, Եփես. 6:18): Սա ակնարկում է ՀԿ-յան մի փոխաբերություն՝ Աստծո Իր ժողովրդի հետ խոսելու վերաբերյալ (տես՝ Ես. 49:2, Ովսեա 6:5): Աստծո հայտնությունը (թե՛ կենդանի Խոսքը՝ Հիսուս Քրիստոսը և թե՛ գրավոր խոսքը՝ Աստվածաշունչը) նկարագրվում է այս նույն տերմիններով Եբր. 4:12-ում: Չնայած որ «խոսք» (*rhēma* ի հակադրություն *logos*-ի) բառի համար ուրիշ հունարեն տերմին է օգտագործվում եբրայերենում, «սուր» բառի համար տերմինը նույնն է (լեզվի տեսքով փոքրիկ հռոմեական զենք):

Վտանգավոր է խիստ մեծ տարբերություն դնել Կոյնե Հունարենում համազոր այս տերմինների միջև (դա կոմերցիոն լեզու էր և Դասական Հունարենի միջև եղած տարբերությունները խամրում էին) ինչպիսիք են «*rhēma*» և «*logos*»-ը: Սա կարող է վերաբերել փորձության ժամանակ սուրբգրային խոսքերի կիրառությանը, ինչպես որ Հիսուսն արեց Մատթ. 4:1բ-ում: Հավատացյալների ավետարանի գիտությունը նրանց կպաշտպանի իրենց ամենօրյա հոգևոր պայքարների ժամանակ: Ահա թե ինչու է Սուրբ Գրքից անգիր հատվածներ սովորելը և Աստվածաշնչի անձնական ուսումնասիրությունը այդքան արժեքավոր՝ կարևոր (տես՝ Սաղմ. 19:7-11, 119:105, Առակ. 6:23): Սա սպառազինության զենքերի ցանկում միակ հարձակվողական զենքն է (չնայած կարծում եմ, որ Եփես. 6:18-ում աղոթքն էլ մյուսն է): Այն պաշտպանության համար է: Ինչպես որ Եփես. 6:18-20-ում է, այն կարող է կիրառվել Արքայության առաջխաղացման համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6:18-20
18Բոլոր աղոթքներով ու աղաչանքներով միշտ Հոգով աղոթելով ու, հենց այս բանում, բոլոր սրբերի համար կատարյալ հարատևությամբ և աղաչանքներով արթո՛ւն հսկելով. 19ինձ համար էլ, որպեսզի ինձ խոսք տրվի բերանս համարձակությամբ բացելու, ավետարանի խորհուրդը հայտարարելու, 20որի դեսպանն եմ ես շղթաների մեջ, որպեսզի այս վիճակում էլ համարձակություն ունենամ այնպես խոսելու, ինչպես պարտավոր եմ խոսել:

6:18 «բոլոր աղոթքներով ու աղաչանքներով միշտ աղոթելով» Ուշադրություն դարձրե՛ք, թե քանի անգամ է «բոլոր» ներառական բառն օգտագործվում Եփես. 6:18-ում: Աղոթքը մեկ այլ հզոր զենք է հոգևոր պատերազմի մեջ, որը Քրիստոնյայի ամենօրյա կյանքն է այս ընկած՝ մեղավոր աշխարհում: Պողոսը խնդրում էր աղոթել իր համար Եփես. 6:19-ում (տես՝ Կող. 4:3-4, 1 Թեսաղ. 5:17): Նա չի խնդրում անձնական խնդիրների համար, այլ ավետարանի քարոզչության պարզության և համարձակության համար (տես՝ Կող. 4:3-4): Հետաքրքիր է նշել, որ Պողոսը չի քննարկում Կողոսացիների թղթում հոգևոր պատերազմը, սակայն շեշտադրում է աղոթքի անհրաժեշտությունը (տես՝ Կող. 4:2):

❖ **«Հոգով»** «Հոգի» տերմինը հոդ չունի: Սա կարելի է հասկանալ տարբեր կերպերով: Այն կարող է վերաբերել՝

1. Հոգին հավատացյալների համար աղոթի (տես՝ Հռոմ. 8:26-27)
2. Քրիստոնյաները հոգևոր զորությամբ աղոթեն (տես՝ Հուդա 1:20)
3. Հովհ. 4:23-ին զուգահեռ «հոգով և ճշմարտությամբ» աղոթել
4. «հոգին» որպես «մտքից» առանձնացված (տես՝ 1 Կորնթ. 14:14-15)

Արդյունավետ, ջերմեռանդ աղոթքը անհնար է առանց Հոգու ներգրավվածության:

Ուշադրություն դարձրեք հոգով առաջնորդված աղոթքին՝

1. ամեն ժամանակ՝ միշտ
2. Հոգով
3. արթուն մնացեք հարատևությամբ
4. աղոթեք բոլոր սրբերի համար

❖ **«բոլոր սրբերի համար»** Տե՛ս Հատուկ Թեմա. Սրբեր, Կող. 1:2-ում:

6:19 «*աղոթե՛ք* ինձ համար էլ» Պողոսը աղոթք էր խնդրում, ոչ թե իր համար անձնապես, այլ զորության համար, որպեսզի հռոմեական իշխանությունների առջև դատավարությունների ժամանակ խոսելիս ավետարանը հստակ ներկայացնի (տես՝ Կող. 4:3, 1 Թեսաղ. 5:25, 2 Թեսաղ. 3:1):

1. «որպեսզի ինձ խոսք տրվի» (Եփես. 6:19)
2. «համարձակությամբ ավետարանի խորհուրդը հայտարարելու» (Եփես. 6:19, «խոսքի ազատություն», տես՝ Եփես. 3:12, Եբր. 4:16, 10:19,35):
3. «համարձակություն ունենամ այնպես խոսելու, ինչպես պարտավոր եմ խոսել» (Եփես. 6:20, Կող. 4:4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՂՈԹՔ
SPECIAL TOPIC: EFFECTIVE PRAYER

Ա. Կապված Եռամեկ Աստծո հետ մարդու անձնական փոխհարաբերության հետ՝

1. Կապված Հոր կամքի հետ՝
   ա. Մատթ. 6:10
   բ. 1 Հովհ. 3:22
   գ. 1 Հովհ. 5:14-15
2. Հիսուսի մեջ բնակվելու համար՝
   Հովհ. 15:7
3. Հիսուսի անունով աղոթելը՝
   ա. Հովհ. 14:13,14
   բ. Հովհ. 15:16
   գ. Հովհ. 16:23-24
4. Հոգով աղոթելը՝
   ա. Եփես. 6:18
   բ. Հուդա 1:20

Բ. Կապված մարդու անձնական շարժառիթների հետ՝

1. Չտարակուսելը՝
   ա. Մատթ. 21:22
   բ. Հակ. 1:6-7
2. սխալ խնդրելը՝
   Հակոբոս 4:3

3. Եսասիրաբար խնդրելը՝
   Հակոբոս 4:2-3

Գ. Կապված մարդու անձնական որոշումների հետ՝
1. Համբերություն՝
   ա. Ղուկ. 18:1-8
   բ. Կողոսացիների 4:2
   գ. Հակոբոս 5:16
2. Ընտանիքում տարաձայնություններ՝
   1 Պետրոս 3:7
3. Մեղք
   ա. Սաղմ. 66:18
   բ. Եսայի 59:1-2
   գ. Եսայի 64:7

Բոլոր աղոթքներն էլ պատասխանվում են, սակայն ո՛չ բոլոր աղոթքներն են արդյունավետ: Աղոթքը երկկողմանի փոխհարաբերություն է: Վատագույն բանը, որ Աստված կարող էր անել՝ շնորհել հավատացյալներին իրենց անպատշաճ՝ անտեղի խնդրանքները:

❖ **«համարձակությամբ»** Տե՛ս Հատուկ Թեմա. Համարձակություն (*parrhēsia*), Կող. 2:15-ում:

❖ **«ավետարանի խորհուրդը»** Պողոսը օգտագործում է այս տերմինը մի քանի տարբեր կերպերով՝ նկարագրելով Աստծո փրկագործության ծրագիրը: Այստեղ այն վերաբերում է հավատացյալ հրեաներին և հեթանոսներին, որոնք մեկ մարմին էին Քրիստոսի մեջ: Այս հասկացությունը հստակ կերպով արտահայտվում է Եփես. 2:11-3:13-ում: Տվյալ տերմինը հայտնվում է Եփես. 1:9, 3:3,4,9, 5:32-ում: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 3:3-ում:

6:20 «որի դեսպանն եմ ես շղթաների մեջ» Պողոսը հասկանում էր, որ ինքը կանչված էր Հեթանոսների մեջ թե՛ առաքյալ, թե՛ սպասավոր (1 Կորնթ. 4:1, 9:17, Տիտոս 1:7) և թե՛ դեսպան լինելու (տես՝ 2 Կորնթ. 5:20): Նա բանտում էր, որպեսզի քարոզեր ավետարանը հռոմեացի կառավարիչներին Հռոմում, ինչպես որ քարոզեց Հուդայում գտնվող կառավարիչներին (տես՝ Գործք 9:15):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6:21-22
[21]Բայց որպեսզի իմանաք իմ գործերի մասին, Տյուքիկոս սիրելի եղբայրը և Տիրոջ հավատարիմ սպասավորը ձեզ ամեն ինչ պիտի տեղեկացնի, [22]ում ձեզ մոտ ուղարկեցի հենց այն նպատակով, որ մեր մասին տեղեկություն ունենաք, և նա ձեր սրտերը մխիթարի:

6:21 «Տյուքիկոս սիրելի եղբայրը և Տիրոջ հավատարիմ սպասավորը» Նրա մասին նշվում է Գործք 20:4, Կող. 4:7, Տիտոս 3:12, 2 Տիմ. 4:12-ում: Նա էր նամակը կրողը: Նաև հավանական է, որ հենց ինքն է տարել Կողոսացիներին և Փիլիմոնին հասցեագրված նամակները Փոքր Ասիա և նրան ընկերակցում էր Ոնեսիմոսը: Նաև հավանական է, որ ինքն է տարել Եփեսացիների թուղթը Փոքր Ասիայի բոլոր եկեղեցիներին: Հնարավոր է նաև նա է եղել Պողոսի դպիրը, ինչպես Հռոմեացիների 16:22-ի Տերտիոսը:

6:21-22 Այս համարները հունարենում նույնն են ինչ Կող. 4:7-8-ը, բացառությամբ այն բանի, որ Կողոսացիները ավելացնում է «ծառայակից» բառը, որը ցույց է տալիս, որ Պողոսը հավանաբար այս երկու գրքերը գրել է իրար մոտ ժամանակներում:

6:22 Պողոսն ուզում էր, որ եկեղեցիներն իմանային իր իրավիճակների մասին, որպեսզի կարողանային աղոթել և չանհանգստանալ իր համար: Նա զգում էր, որ ինքը գտնվում էր իր կյանքի և ծառայության համար Աստծո կամքի մեջ (տես՝ Գործք 9:15):

❖ **«սրտեր»** Տե՛ս Հատուկ Թեմա Կող. 2:2-ում:

❖ Հնարավոր է հետաքրքիր է, թե արդյո՞ք Պողոսն ինքը չի գրել այս և 6:23-24 համարները:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6:23-24
23Խաղաղությո՛ւն եղբայրներին և սե՛ր հավատով հանդերձ՝ Հայր Աստծուց և Տեր Հիսուս Քրիստոսից: 24Թող շնորհը լինի բոլոր նրանց հետ, ովքեր անկեղծությամբ սիրում են մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Ամեն:

6:23-24 Այս նույն թեմաները բացում են նամակը: Պողոսը սովորաբար գրում էր փակման մտքերը իր իսկ ձեռքով, որպեսզի հաստատի իր նամակների հեղինակությունը:

6:24

NASB	**«անապակ սիրով»**
NKJV	**«անկեղծությամբ»**
NRSV	**«անվախճան սեր»**
TEV	**«անվախճան սիրով»**
NJB	**«հավիտենական սիրով»**

Այս տերմինը սովորաբար նշանակում է «անապակ» (տես՝ 1 Կորնթ. 9:25, 15:52, 1 Տիմ. 1:17): Այն ունի չփոփոխվող և հավիտենական ինչ-որ բանի նշանակություն: Սա քաջալերանք էր սուտ վարդապետների պատճառած այն շփոթության և բախումների և անձնական հոգևոր պատերազմի մեջ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք մեր աշխարհում գոյություն ունի չարի անձնական զորություն:
2. Ո՞րն է մեր պատասխանատվությունը հոգևոր պայքարում:
3. Ինչո՞ւ է Պողոսը կիրառում պատերազմը որպես Քրիստոնեական կյանքի նկարագրություն:
4. Ի՞նչ է խնդրում Պողոսն իր համար: